# ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ

Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան տոնի կապակցությամբ հունվարի 5-ին և 6-ին Գուգարաց թեմի բոլոր եկեղեցիներում մատուցվեցին Սուրբ Ծննդյան սրբազան պատարագներ:

Հունվարի 5-ի երեկոյան Վանաձորի բոլոր եկեղեցիներում ավետվեց Փրկչի Ծնունդը և մատուցվեց Ճրագալույցի Սուրբ Պատարագ: Հավարտ Պատարագի բազմաթիվ հավատացյալներ շնորհավորեցին միմյանց և, վառելով իրենց ճրագներն ու մոմերը, լույս ու ավետիս տարան իրենց օջախները:

Հաջորդ օրը՝ հունվարի 6-ին, Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի առաջնորդանիստ Մայր եկեղեցում Սուրբ Ծննդյան Պատարագ մատուցեց թեմակալ առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը: Սրբազան Հայրն, ընթերցելով Ամենայն Հայոց Հայրապետի Սուրբ Ծննդյան պատգամը, նաև շնորհավորեց Ամանորի ու Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ և ապա հավատացյալներին ուղղելով իր խոսքը՝ ասաց. «Ես ձեզ նմանեցնում եմ այն մոգերին և հովիվներին, ովքեր մեծամեծ նվերներով, Լուսապտու աստղի առաջնորդությամբ գնում էին Բեթղեհեմ՝ տեսնելու Թագավորին ու Փրկչին: Այսօր ահա բոլորս ենք եկել մեր Բեթղեհեմը՝ Հայաստանյայց Առաքելական Մայր եկեղեցին և մեր հոգևոր նվիրումը բերել Հիսուս մանուկին՝ խոնարհվելու և երկրպագելու Նրան»: Սրբազան արարողությանը ներկա էին քաղաքային և մարզային իշխանության ներկայացուցիչներ և բազմաթիվ հավատացյալներ:

Պատարագի ավարտից անմիջապես հետո մեծ հանդիսությամբ կատարվեց Ջրօրհնյաց արարողություն՝ ի նշան Հորդանան գետում մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մկրտության: Ապա օրհնված ջուրը որպես մաքրության խորհրդանիշ և բալասան ամենայն հիվանդաց, տարվեց տուն: Ի դեպ, տարեց տարի Լոռու մարզի հավատացյալ ժողովուրդը հոգևոր ծեսերի նկատմամբ առավել նախանձախնդիր է դառնում, և եկեղեցական տոներին հետաքրքրությունն ու մասնակցությունն աննախադեպ չափերի է հասնում, որն էլ հուսադրող է ու մխիթարական:

Համաձայն ընդունված կարգի՝ Հայոց Եկեղեցու Ջրօրհնյաց կարգի խաչքավորության պարտականությունը հանձն առան մի խումբ բարեպաշտ հայորդիներ. Վանաձորի Սուրբ Աստվածածին եկեղեցու խաչքավորն էր «Սեզամ -Գազ» ՍՊԸ տնօրեն Արմեն Մխոյանը, Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու խաչքավորը՝ «Մատինյանի Նշխար» ՍՊԸ տնօրեն Արմեն Սարուխանյանը, Սուրբ Սարգիս եկեղեցու խաչքավորը՝ արվեստագետ և պատկերասրահի տնօրեն Փափագ Ալոյանը:

Հիսուս Քրիստոսի հրաշափառ Ծննդյամբ թող երկնառաք խաղաղություն հաստատվի աշխարհում և մեր հոգիներում:

*ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ*